□□□□ □□□□□□□□□□□ □□□□□ «□□□□□□□□» □□□□□□□□ □□□□□ □□□ ***2011*** □□□□□□□□ □□□□□□□□□□□:□□□ □□□□□□ □□□□□□□□□□ □□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ «□□□□ □□□□□□□□ □□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□» □□□□□□□□ □□□□□□□□ □□ □□□□□□□□ ***150*** □□□□□□□□□□□□□□□□ □□□□□,□□□□□□□ □□□□□ □□□□ □□□□□ □□□□□□□□□,□□□□□ □□□□□□□ □□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□:□□□□□□□□,□□□□□□□□□□□□□□□□ □□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□□

այսօր առավել հստակ են խոսում վրացերեն, առավել քաջատեղյակ են մեր ընդհանուր երկրի Վրաստանի մասին ու առավել շատ են սիրում այն: Սիրեցի բոլորին, անխտիր: Նրանց հետ, նրանց օջախներում երկու տարի ապրել եմ, կիսել երջանկություն ու դժբախտություն, նրանք այն մարդիկ են, ովքեր ամեն ինչում սատարել են ինձ: Հիանալի բարեկամական կապեր եմ հաստատել նրանց հետ, խորապես հարգում ու շատ եմ սիրում նրանցից յուրաքանչյուրին: Հպարտ եմ, որ լավագույն տնօրենի հետ եմ աշխատել: Ընդամենը մեկ շաբաթ առաջ հյուրընկալվել էի նրանց: Այնքա՜ն էինք ուրախացել....
«Զավեշտալին այն է,- գրված է նամակում,- որ եթե ես նրանց վրացերեն, ապա իրենք ինձ հայերեն էին սովորեցնում: Երկու տարի անց, ես արդեն հասկանում էի, թե ինչ թեմայի շուրջ էին խոսում ուսուցչանոցում, իսկ երբ աշակերտը հայերեն էր թարգմանում վրացերեն տեքստը, միանգամից գտնում էի սխալը: Իսկ վերադարձից առաջ մանկավարժները «ստիպեցին» նույնիսկ հայոց լեզվի քննություն հանձնել, եւ ես «ստիպված էի» վրացերենի դասագրքում եղած բառերը թարգամանել հայերեն, պատկերացրեք հի՛նգ էլ ստացա, մանավանդ, որ հայերենով ընթերցեցի նաեւ:
«Պարզ է, որ այսքանից հետո, ես անպայման պիտի այցելեի նաեւ Հայաստան: Վրացի մի խումբ ընկերներով եղանք մի քանի քաղաքներում: Առաջնահերթորեն այցելեցինք Օշական, տեսանք Մեսրոպ Մաշտոցի շիրիմը, եկեղեցին, բակում տեղադրված քարե տառերը հայոց այբուբենի... ապա եղանք նաեւ Էջմիածնում, Գառնիում, Գեղարդում, ուր վեր խոյացող այդ չքնաղ եկեղեցին տեսանք, որն ինձ վրա անկրկնելի տպավորություն թողեց: Իսկ երեկոյան եկանք Երեւան, անցանք նրա կենտրոնական փողոցներով ու երկար զմայլվեցինք երգող շատրվաններով, որոնք իրենց դյութիչ երգ ու պարով անջնջելի հետք թողեցին բոլորիս հոգիներում: Ես իմ շրջապատին, ում հետ շփվում եմ, եւ ովքեր քիչ գիտեն հայերի մասին, մեծ սիրով նրանց բոլորին պատմում եմ Հայաստանի ու ընդհանրապես հայերի մասին, ում հետ իմ բարեկամությունն այլեւս ավարտ չունի»:
«Նամակն այս,- գրված էր ավարտին,- Ամանորի նախաշեմին եմ ուղարկում: Ուստի մեծ է ցանկությունս այս կերպ եւս շնորհավորել իմ սիրելի օռլովկացիներին, նիկոծմինդացիներին, «Վրաստան» թերթի բոլոր ընթերցողներին ու նաեւ ձե՛զ, իմ սիրելի համերկրացի հայեր: Ձեզ ու վրացի երիտասարդությանը ձեռքբերումների ու վերելքների տարի եմ մաղթում, միմյանց միջեւ հաստատվող միայն լավագույն կապերով փայլենք: Եվ իբրեւ կարգախոս որդեգրենք այն, որ միայն միասին կարող ենք հզորացնել մեր եկիրը»: